ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 19-ը դեկտեմբերի 2017թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Աբովյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Մ. Խալաթյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բաղալյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/5» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/5» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4.Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/5» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ռ. Մարդոյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **«Էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման»** ծառայություններով ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/5» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանում	Հասցե
1	Ա/Ձ Մեսրոպ Աղազարյան Վիգենի	Արարատի մարզ, գ. Սուրենավան, Արցախի փ 15
2	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	ք. Երևան, Բաշինջաղյան 1փ, 13/30

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/5» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ռ. Մարդոյան)

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում 26.12.2017թ. ժամը 14:40-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են.
2.3 Ա/Ձ Մեսրոպ Աղազարյան Վիգենի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին): «Էյչ

Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ տուժանքի մասին համաձայնության կից ներկայացված վճարման պահանջագրում նշված գումարը ավելի քիչ է, քան առաջարկվող չափաբաժնի առավելագույն գնի 5%-ը: Հիմք ընդունելով նշված հանգամանքը՝ հանձնաժողովը որոշեց մերժել «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ռ. Մարդոյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Ապրանքի անվանում	Նախահաշվային գին/դրամ/	«Էյչ Գրուպ» ՍՊԸ		Ա/Ձ Մեսրոպ Աղազարյան Վիգենի	
			Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	Փոխակերպիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ (օդորակիչների նորոգման և սպասարկման ծառայություններ)	817,400	662,750	795,300	682,450	682,450

Ներկայացված են առանձին տեսակի ծառայությունների համար առաջարկվող միավորի գների հարաբերակցության արդյունքում մասնակիցների առաջարկած գները: Ի գիտություն. «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ծառայությունների մասով Ա/Ձ Մեսրոպ Աղազարյան Վիգենի կողմից առաջարկված գինը (Հավելված 4.1-ի մի շարք անվանատողերի մասով) գերազանցում էր պատվիրատուի՝ տվյալ գնման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի պահանջները, գների նվազեցման նպատակով 29.12.2017թ. ժամը 10:30-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպվեցին գների նվազեցման բանակցություններ: Բանակցությունների արդյունքում Ա/Ձ Մեսրոպ Աղազարյան Վիգենի կողմից առաջարկված գները նվազեցվեցին և արդյունքում գնային առաջարկը կազմեց 678,500 (վեց հարյուր յոթանասունութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ընդ որում մասնակիցը ԱԱՀ չի վճարում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/5» ծածկագրով գնանշման հայցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ռ. Մարդոյան)

4.1 **10.01.2018թ** (էլեկտրոնային գնահատման արդյունքում) «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1 ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Մեսրոպ Աղազարյան Վիգենի» Ա/Ձ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ռ. Մարդոյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/5» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացության ներկայացման վերջնաժամկետի օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ս. Աբովյան
Գնահատող	Մ. Խալաթյան
Գնահատող	Հ. Բաղալյան
Գնահատող	Ա. Մաղաքյան
Գնումները համակարգող՝	Ռ. Մարդոյան

10.01.2018թ.